Արամ Այվազյան
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության
հատկապես կարևոր գործերով քննիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019–2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 03.10.2019թ. ԹԻՎ 1332–Ն ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հոդվածում քննարկվել է ենթարկվել «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019–2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.10.2019թ. թիվ 1332–ն որոշումը, արձանագրվել է դրա կարևորությունը ՀՀ պետական իշխանության կողմից ձեռնարկվող հակակոռուպցիոն համընդհանուր քաղաքականության շրջանակներում: Դրան զուգահեռ վեր են հանվել ծրագրում առկա տեսական և իրավակիրառ բնույթի մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման կապակցությամբ տրվել են կոնկրետ առաջարկություններ:

Հիմնաբառեր. կոռուպցիա, պետական քաղաքականություն, պետական իշխանություն, պաշտոնեական դիրքի չարաշահում, օրինականություն, հովանավորչություն

Ներածություն

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է գլխավորապես նրանով, որ դրա լուծված

չլինելու հիմնական բացասական հետևանքներից մեկը իրավունքի սոցիալական արժեքի կորուստն է: Այդպիսի իրադրությունում իրավական համակարգն ի զորու չի լինում պաշտպանել մարդու և քաղաքացու օրինական շահերը, այն սկսում է ծառայել որպես գործիք առանձին անձանց պահանջմունքների բավարարման համար, ինչը հանգեցնում է իրավունքի բարոյական արժեզրկմանը: Հենց այդ գիտակցմամբ է կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչվել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության գերակա ուղղություններից մեկը:

Մեթոդ

Հետազոտության մեջ տեսական հիմնավորումները տրված են իրավահամեմատական և համակարգակառուցվածքային մեթոդների հիման վրա: Որպես տեսական հիմք ընդունվել է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019–2022 թվականների միջոցառումների ծրագիրը: Հետևությունները կատարված են՝ հաշվի առնելով իրավապահ մարմինների կողմից իրենց գործունեության ընթացքում հանդիպած իրավակիրառ պրակտիկայում առկա հիմնախնդիրները և օրենսդրական բացերը:

«Կոռուպցիայի» հասկացության օրենսդրական բացը և առաջարկվող լուծումները

Հակակոռուպցիոն բնույթի միջոցառումների համատեքստում իր առանձնահատուկ դերն ունի Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019–2022 թվականների միջոցառումների ծրագիրը (Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019–2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին)[1], որի վերաբերյալ առկա են որոշակի տեսական և գործնական հիմնախնդիրներ: Այսպես՝

Ա. Կոռուպցիայի դեմ տարվող պայքարը, որպես պետական անզիջում քաղաքականություն, անհրաժեշտ է սկսել նախևառաջ «Կոռուպցիա» հասկացությանն օրենսդրորեն հստակ ձևակերպում տալով: Կոռուպցիա եզրույթը, որն, ըստ էության, հանդիսանում է հիմնականում քրեաիրավական հատկանիշներ պարունակող մեկ ընդհանուր ամբողջություն, հարկավոր է համապատասխան առանձին նորմով ամրագրել ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում՝ այնպես, ինչպես հանցակցության հասկացությունը, այնպես, ինչպես հանցագործությունների ռեցիդիվը և այլն: Հակառակ պարագայում ռազմավարության ծրագրով կստացվի պայքար մի երևույթի դեմ, որի վերաբերյալ պետությունը նորմատիվ-իրավական տեսանկյունից չի հստակեցնում դրա անհրաժեշտ և բավարար չափորոշիչները: Այսինքն, որպեսզի իրավական տեսանկյունից իրականացվի պայքար կոռուպցիայի դեմ, այդ թվում՝ քրեաիրավական գործիքակազմով, անհրաժեշտ է տալ դրա քրեաիրավական բնորոշումը, այլապես կստացվի պայքար հասարա-

1 Տե՛ս www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876 (մուտք՝ 20.02.2020): Այսուհետ՝ Ծրագիր:

կական կյանքի, այսպես ասած, «ուրվական» չարիքի դեմ:

«Կոռուպցիա» հասկացության սահմանմանն անդրադարձել են քրեական իրավունքի տեսության մեջ մի շարք քրեագետներ, որոնց կողմից տրված բնորոշումները միմյանց փոխլրացնում, իսկ երբեմն՝ նաև հակասում են: Այս տեսանկյունից առաջարկվում է «Կոռուպցիա» հասկացության վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում առանձին նորմով տալ հետևյալ մեկ ամբողջական բնորոշում. «Կոռուպցիան սոցիալ-իրավական, քաղաքական, տնտեսական և բարոյական երևույթ է, որն արտահայտվում է պետական ծառայողի կամ առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից իրենց պաշտոնական դիրքից բխող ծառայողական լիազորությունների և հնարավորությունների օգտագործմամբ՝ անձնական, խմբային կամ կորպորատիվ շահերի համար կամ այդ անձանց այդպիսի բարիքների տրամադրումը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից»: Նշված բնորոշման վերաբերյալ հնարավոր է առանձին քրեագետներ կարտահայտեն իրենց տարբերակված մոտեցումները, սակայն, ամեն դեպքում, «Կոռուպցիա» հասկացության սահմանման բացակայությունը համարվում է էական հիմնախնդիր:

Բ. «Կոռուպցիա» հասկացության օրենսդրական ձևակերպումը տալուց բացի անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասում առանձին նորմով սահմանել նույն օրենսգրքի հատուկ մասում նկարագրված հանցագործություններից կոռուպցիոն դրսևորումները, այսինքն՝ դրանց ցանկն այնպես, ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով սահմանված են տուժողի բողոքի հիման վրա հարուցվող քրեական գործերը՝ որպես մասնավոր գանգատի գործեր**:** Գաղափարն այն է, որ իրավակիրառ պրակտիկայում կոռուպցիոն հանցագործությունների ընդդատության հարցը որոշելիս առկա լինի կոնկրետ իրավական հիմք՝ առանձին նորմ, որով, փաստորեն, կառանձնացվեն ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում նկարագրված հանցագործությունների կոռուպցիոն տեսակները: Այս առիթով պետք է նշել, որ խնդրին ինչ-որ չափով լուծում տալու համար այդ հանցագործությունների ցանկը սահմանվել է ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 56 հրամանով[2], որն իրենից ներկայացնում է արդեն մի քանի անգամ լրամշակված փաստաթուղթ: Ընդ որում, մեր կարծիքով այդ ցանկը թերի է, քանի որ դրանում իրավամբ պետք է ներառված լինեին նաև ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ գլխում նախատեսված՝ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հետևյալ հանցագործությունները՝

1. անձին տեղեկություն ներկայացնելուց հրաժարվելը (148-րդ հոդված),
2. ընտրողների ցուցակները կազմելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ընտրողների ցուցակները կազմելու համար սահմանված կարգը խախտելով կեղծիքներ կատարելը (152-րդ հոդվածի 2-րդ մաս):

Կարծում ենք, որ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը պետք է

2 Տես http://www.prosecutor.am/myfiles/files/decrees/56%20-%2027.06.18.pdf (մուտք՝ 20.02.2020)

ամրագրվի անմիջապես օրենսդրական և ոչ թե ենթաօրենսդրական ակտով, որպեսզի կանխվի գործադիր իշխանության, որևէ պաշտոնատար անձի անմիջական ազդեցությունն ու միջամտությունն այդ գործընթացի հետ՝ ցանկի ընդլայնման կամ սահմանափակման իմաստով, թեկուզև քննչական ընդդատության փոփոխության կամ հնարավոր այլ ցանկացած առումով կոռուպցիոն ռիսկեր թույլ չտալու նպատակով:

ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշման թիվ 1 հավելվածի 119-րդ կետում ամրագրված է, որ բացահայտման արդյունավետության տեսանկյունից կոռուպցիոն հանցագործությունների տեսակների հստակեցման նպատակով կկատարվի փոփոխություն ՀՀ քրեական օրենսգրքում և առանձին հավելվածի ներքո կնախատեսվի կոռուպցիոն հանցագործությունների կողմնորոշիչ ցանկը, սակայն չպետք է մոռանալ նաև այն իրողությունը, որ նախկինում նման ցանկերի միջոցով, որպես ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածներ, նախատեսված են եղել նաև թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, մշակումն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը: Սակայն բոլոր այդ հավելվածները 06.12.17թ.-ին իրենց ուժը կորցրել են և այդ ամենը ներկայումս նախատեսված է ՀՀ կառավարության համապատասխան որոշումով և կից հավելվածներով[3]: Այսինքն, այդ իրավակարգավորումը, փաստորեն, անցել է գործադիր իշխանության ոլորտ, որը կոռուպցիոն ռիսկերի չեզոքացման տեսանկյունից նպատակահարմար չէ, ուստի և առաջարկվում է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը նախատեսել ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի հավելվածի տեսքով, այլ այդ օրենսգրքի հենց ընդհանուր մասում՝ դրանով իսկ հնարավորինս այն զերծ պահելով գործադիր իշխանության կողմից անմիջական միջամտության տիրույթից:

Այս տեսանկյունից պետք է մեկընդմիշտ և հստակ արձանագրել հետևյալ սկզբունքը. եթե տարվում է պայքար կոռուպցիայի դեմ, իսկ կոռուպցիան թեկուզև ոչ միշտ, բայց հիմնականում շաղկապված է գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ, ուստի պետք է նախատեսել կոռուպցիային նպաստող յուրաքանչյուր հանգամանք և քայլ առաջ կանխել հնարավոր բոլոր սողանքները:

Գ. Վերը նշված որոշման թիվ 1 հավելվածի 113-րդ կետում արձանագրված է, որ մասնավոր հատվածում թափանցիկության բարձրացման կարևոր գործիքներից է պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտումը և նրանց վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր և հանրամատչելի հարթակի ներդրումը՝ ապահովելով իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների հրապարակայնությունը:

3 Տես https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=118511 (մուտք՝ 20.02.2020)

Այս տեսանկյունից անհրաժեշտ է խոստովանել և փաստել, որ մեր իրականության մեջ բավական լայն տարածում ունի պետական պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից տարբեր ընկերությունների հիմնադրումը, փաստացի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը և շահույթներ ստանալը, որոնք պարզապես իրականացվում են այլ՝ կեղծ հիմնադիրների կողմից և անվամբ: Ինքնին հասկանալի է, որ պետական պաշտոններ զբաղեցնող անձինք՝ նախ օրենքով պարզապես իրավունք չունեն զբաղվելու վարձատրվող այլ աշխատանքով, ստանալու եկամուտներ և երկրորդ, մեծ է վտանգը վերջիններիս կողմից իրենց պաշտոնեական դիրքի օգտագործման շնորհիվ հովանավորչություն կամ այլ ապօրինի գործողություններ կատարելու մասով: Այս ամենն իր մեջ պարունակում է կոռուպցիոն իրական ռիսկեր, որի դեմ պայքարը լուրջ մարտահրավեր է հանդիսանում պետության օրինական տնտեսական քաղաքականության, իրական մրցակցային դաշտի ապահովման և այլ տեսանկյուններից:

Նշված խնդրի կարգավորման համար առաջարկվում է ապօրինի հարստացման օրինակով քրեականացնել ձեռնարկատիրական գործունեություն ծավալելիս իրական հիմնադիրների քողարկումը, այսինքն՝ նախատեսել քրեական պատասխանատվություն այն անձանց համար, ովքեր կհանդիսանան ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու իրական հիմադիրներ կամ մասնակիցներ են, սակայն նրանց կողմից իրենց անձը քողարկվում է և այդ ամենը ներկայացվում է այլ անձանց տվյալներով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու հիմնախնդիրները

Քննարկվող Ծրագրում առկա մյուս հիմնախնդիրը վերաբերում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու հանգամանքին:

Դ. Ծրագրի թիվ 1 հավելվածի 65-րդ կետի 8-րդ ենթակետում, որպես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին օրենքով վերապահված գործառույթ, ի թիվս այլ գործառույթների, վերապահվում է նշանակման ենթակա՝ Հայաստանի Հանրապետության պետական պաշտոնի հավակնող անձանց բարեվարքության կանոնների պահպանումը (չպահպանումը) ու կոռուպցիոն իրավախախտումներում ներքաշված լինելը (չլինելը) ստուգելը և, ըստ այդմ, նշանակման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելը:

Կարծում ենք, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին առաջին հայացքից շատ ողջունելի այս գործառույթը վերապահելը գործնականում կրելու է խիստ ձևական բնույթ, իսկ նախատեսվող խորհրդատվական բնույթի այդ եզրակացությունները կազմվելու են հապճեպ և առանց իրական ուսումնասիրությունների:

Նախ՝ պետք է արձանագրել, որ հանձնաժողովի կազմի խիստ սահմանափակ լինելը գործնականում չի կարող ապահովել հանրապետության մասշտաբով տեղի ունեցող նշանակումների և վերանշանակումների ենթակա անձանց անհրաժեշտ տվյալների պատշաճ ձեռքբերման և հետազոտությունների արդյունավետությունը և, բացի այդ, նշանակման կամ վերանշանակման ենթակա յուրաքանչյուր անձի վերաբերյալ առկա են անհատական անձնական գործեր, որոնցում առկա տվյալների ձեռքբերման և ուսումնասիրման գործառույթը կարող է վերապահվել հենց տվյալ իրավապահ մարմնի անձնակազմի կառավարման համապատասխան ստորաբաժանմանը, իսկ յուրաքանչյուր իրավապահ մարմին առաջինն ինքն է շահագրգռված իր հաստիքները արհեստավարժ և բարեվարքության կանոնները պահպանող աշխատակիցներով համալրելու առումով: Նման պարագայում, այդ գործառույթը վերը հիշատակված հանձնաժողովին լիազորելը կդիտվի սոսկ հռչակագրային և մանիպուլյատիվ քայլ: Ընդ որում, առկա է նաև կանխավարկած, ըստ որի՝ նշված հանձնաժողովի կողմից գործնականում օբյեկտիվորեն հապճեպ խորհրդատվական բնույթի եզրակացություններ տալը կարող է իր մեջ պարունակել նաև կոռուպցիոն հարակից ռիսկեր:

Ե. Ծրագիրը հաստատելու մասին որոշման թիվ 1 հավելվածի 72-րդ կետում նախատեսվող հակակոռուպցիոն մասնագիտացված հատուկ մարմնի՝ կոմիտեի ստեղծման անհրաժեշտությունը հիմնավորելու վերաբերյալ արձանագրված է, որ, մասնավորապես, կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետությունը կարող է երաշխավորված լինել միայն այն պարագայում, երբ այդ գործառույթը հիմնականում վերապահված է մեկ մարմնի:

Զարգացնելով Ծրագրով առաջ քաշված այդ թեզը, գտնում ենք, որ ստեղծվելիք կոմիտեին անհրաժեշտ է տալ ավելի լայն նշանակություն, քան զուտ կոռուպցիայի քննությունը և բացահայտումը: Ըստ մեզ, անհրաժեշտ է ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ մի այնպիսի մարմին, որը կտարբերվի այլ մարմիններից, մասնավորապես՝ նախաքննական մարմիններից և ոչ թե «կոսմետիկական զանազան շղարշներով», այլ առանցքային գեր նպատակով:

Նշված մարմնի ֆունկցիոնալ պարտականությունների մեջ կարող են մտնել հետևյալ լիազորությունները՝

- պետական կառավարման բոլոր ճյուղերի կոռումպացվածության մասին տեղեկությունների հավաքումը և վերլուծումը, դրանք ծնող պատճառների ուսումնասիրումը,
- նորմատիվ ակտերի փորձաքննության անցկացումը՝ նրանցում կոռուպցիայի դրսևորման պայմանները բացառելու նկատառումներով,
- քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցության կազմակերպումը, հակակոռուպցիոն ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպությունների հետ գործողությունների հետ միասնացումը,
- աշխատանքը զանգվածային լրատվության և բնակչության հետ, կո-

ռուպցիայից տուժածների իրավական ծառայության ստեղծում՝ մշտապես գործող «տաք գծի» առկայությամբ,
- գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերին աջակցության ցուցաբերումը և վերահսկողության իրականացումը,
- կոռուպցիոն իրավախախտումների վերաբերյալ բողոքների ընդունումը, քննարկումը և ընթացք տալը, քաղաքացիներին և կազմակերպություններին կոռուպցիայի հակազդմանն ուղղված միջոցառումների մասին խորհրդատվությունը,
- կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի վերաբերյալ գործերով նախաքննության կատարումը,
- արտասահմանյան պետությունների նմանօրինակ գործունեությամբ զբաղվող գերատեսչությունների հետ արդյունավետ երկկողմ, տարածաշրջանային ու միջազգային հարաբերությունների ստեղծումը և պահպանումը:
- կոռուպցիայի սանձահարման հիմնախնդիրների մասին հատուկ և ուսումնաճանաչողական գրականության մշակումն ու հրատարակումը,
- կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի իրականացման ընթացքի մասին հասարակությանն իրազեկելու համար տեղեկատվության պարբերաբար հրապարակումը:

Ահա խնդիրների այն ոչ լրիվ ցանկը, որոնց իրականացումը կարող է դրվել կոռուպցիայի կանխարգելման մարմնի վրա:

Եզրակացություն

Ամփոփելով վերը շարադրյալը, արձանագրենք, որ հասարակական չարիք համարվող երևույթի՝ կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով ստեղծվելիք այս նոր կառույցում, որպես մեկ ընդհանուր տանիք, պետք է պարփակվեն այն բոլոր գործառույթները, գործիքակազմերն ու հաստիքները, որոնց միաժամանակյա և փոխկապակցված համագործակցության մեխանիզմով միայն հնարավոր կլինի գործել արագ և արդյունավետ, այդ ամբողջ գործընթացում հնարավորինս զերծ մնալ այլ մարմիններից, թեկուզև աշխատանքային օժանդակության առումով որևէ կերպ կախվածություն ունենալուց: Հակառակ պարագայում, եթե այս ամենի արդյունքում չունենանք կոռուպցիայի դեմ պայքար իրականացնելու առաքելությամբ օժտված և այդ առումով համալիր և բավարար սպառիչ գործառույթներ կրող կառույց, ապա պետությունը, կրկին ստեղծելով իրավապահ հերթական մարմինը, կանգնելու է, այսպես կոչված՝ «կոտրված տաշտակի առաջ»՝ ընկղմվելով պետական տարաբնույթ մարմինների հետ ամենատարբեր բյուրոկրատական քաշքշուկների հորձանուտում:

Օգտագործված գրականության ցանկ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019–2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՀՊՏ 2019.10.09/70(1523).1 Հոդ.915.11 https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876 (մուտք՝ 20.02.2020):

ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. հունիսի 27–ի N 56 հրամանը «ՀՀ գլխավոր դատախազի 2017 թ. հունվարի 19–ի N 3 հրամանում լրացումներ կատարելու մասին»: Հայաստանի Հանրապետության Դատախազություն: http://www.prosecutor.am/myfiles/files/decrees/56%20–%2027.06.18.pdf (մուտք՝ 20.02.2020):

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք ընդունված՝ 2017 թվականի դեկտեմբերի 6–ին: Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: ՀՀՊՏ 2017.12.27/81(1356).1 Հոդ.1285.11 https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=118511 (մուտք՝ 20.02.2020):

References

Hayastani Hanrapetutyan hakakorupcion razmavarutyuny ev dra irakanacman 2019–2022 tvakanneri mijocarumneri tcragiry hastatelu masin (Approving the Republic of Armenia anti–corruption strategy and its implementation plan for 2019–2022): Hayastani iravakan teghekatvakan hamakarg: HHPT 2019.10.09/70(1523).1 Hod.915.11 (In Arm.) https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134876 (20.02.2020).

HH glkhavor datakhszi 2018t. hunisi 27–i N 56 hramany «HH glkhavor datakhazi 2017t. hunvari 19–i N 3 hramanum lracumner katarelu masin» (RA Prosecutor General's Order No. 56 of June 27, 2018 "On making additions to the RA Prosecutor General's order N 3 of January 19, 2017"): Hayastani Hanrapetutyan Datakhazutyun: (In Arm.) http://www.prosecutor.am/myfiles/files/decrees/56%20–%2027.06.18.pdf (20.02.2020).

«Hayastani Hanrapetutyan qreakan orensgrqum popokhutyunner ev lracumner katarelu masin» HH orenq yndunvatc 2017 tvakani dektemberi 6–in: (Law on Making Amendments and Addenda to the Criminal Code of the Republic of Armenia). Hayastani iravakan teghekatvakan hamakarg. HHPT 2017.12.27/81(1356).1 Hod.1285.11 (In Arm.) https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=118511 (20.02.2020).

Арам Айвазян

Следователь по особо важным делам следственного управления Комитета государственных доходов Республики Армения, кандидат юридических наук

ПРОБЛЕМЫ, КАСАЮЩИЕСЯ ПОСТАНОВЛЕНИЯ 1332–Н ПРАВИТЕЛЬСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ОТ 03.10.2019 ГОДА «Об УТВЕРЖДЕНИИ АНТИКОРРУПЦИОННОЙ СТРАТЕГИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ПРОГРАММЫ МЕРОПРИЯТИЙ ПО ЕЕ ОСУЩЕСТВЛЕНИЮ НА 2019–2020 ГОДЫ»

В статье проанализировано Постановление 1332–Н Правительства Республики Армения от 03.10.2019 года «Об утверждении антикоррупционной

стратегии Республики Армения и программы мероприятий по ее осуществлению на 2019–2020 годы», подчеркнуто его значение в рамках общей антикоррупционной политики, осуществляемой государственной властью Республики Армения. Вместе с тем в статье выявлены некоторые проблемы теоретического и правоприменительного характера, для решения или преодоления которых представлены конкретные предложения.

Ключевые слова: Коррупция, государственная политика, государственная власть, злоупотребление должностным положением, законность, покрывательство.

Aram Ayvazyan
Senior Investigator by Especially Important Cases of the Investigative Department of the State Revenue Committee of the Republic of Armenia, Ph.D in Law

SOME ISSUES RELATED TO THE DECISION OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA NO 1332–N OF 3 OCTOBER 2019 ON CONFIRMATION OF THE ANTI–CORRUPTION STRATEGY OF THE REPUBLIC OF ARMENIA AND ITS 2019–2022 ACTION PLAN

The Decision of the Government of the Republic of Armenia No 1332–N of 3 October 2019 on Confirmation of the Anti–Corruption Strategy of the Republic of Armenia and its 2019–2022 Action Plan have been studied in the article recognizing its importance in the scope anti–corruption policy implemented by state authorities of the Republic of Armenia. In parallel, some theoretical and law enforcement issues of Plan have been revealed and specific proposals have been made to solve or counteract them as much as possible.

Keywords: corruption, state policy, state power, abuse of official position, legality, favoring.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. մարտի 4–ին
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. մարտի 10–ին
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. մարտի 22–ին